# ՊԱՏԵՐԱԶՄԸ

## ՀԱՐԱՒ-ԱՓՐԻԿԱՅՈՒՄ

---

Այժմ ստացուած է աւելի ճիշդ տեղեկութիւն Կրոնչէի անձնատուր եղած զօրքի թւի մասին. այդ թիւն է 2.800 մարդ։ Անշուշտ մանաւանդ բուրերի համար այդ մի խոշոր ուժ էր որ կորաւ, բայց եթէ ի նկատ առնենք որ անգլիացիք Կրոնչէի զօրքի թիւը 10.000 էին որոշում, որը հալածանքի ենթարկեց անգլիացոց կողմից, շուտով Կիմբերլէյի ազատումից յետոյ, ապա կ'տեսնենք որ Կրոնչէն կարողացել է իւր զօրքի ամենամեծ մասը պաշարուելուց և անձնատուր լինելուց ազատել։

Անգլիան, Կրոնչէի անձնատուր եղած զօրքը Կապշտադ ղրկելով, շուտով տեսաւ որ այդքան գերի պահելը մի երկրում, ուր այնքան հազար աֆրիկանդերներ կան՝ բուրերին բարեկամ, վտանգաւոր է և ծրագրեց Կրոնչէին և նորա զօրքը տեղափոխել Սբ. Հեղինէի կղզին։ Այդ ծրագիրը, մինչեւ այս մարտ ամսի վերջը իրագործուեց մասամբ միայն։ Միայն թէ գերիների մէջ մեծ փոխսով տիֆով ու այլ ցաւերով հիւանդներ կան և շատ են մեռնողները։ Յետոյ իմացուեց նաև, որ բուրերի բարեկամները ծրագրել էին գերիներին փախցնել։

Անգլիացոց յառաջխաղացութիւնը, Օրանժեան հանրապետութեան մայրաքաղաք Բլումֆոնթէնի գրաւումով՝ կանգ առաւ։ Անգլ. զօրքերի ընդհանուր հրամանատար Ռոբէրտսը զբաղուեց ուժերը ժողովելով, իսկ բուրերը իրենց նոր դիրքերը ամրացնելով։ Մինչև մարտի վերջը. վճռողական նշանակութիւն ունեցող գործողութիւններ չըկատարուեցան, բայց և այնպէս անգլիացոց յաջողութիւնների կանգ առնելը նշան էր որ առաջ գնալը այնքան հեշտ չէ, ինչպէս այդ թւում էր քիչ առաջ։ Տրանսվաալի և Օրանժեան հանրապետութեան միութիւնը աւելի ևս ամրապնդուեց. Կրիւգէրը, միջնորդութեան համար պետութիւններին դիմելով՝ ամուր կանգնած էր անկախութեան պայմանի վրայ, և նոյնն էր պնդում լորդ Սալիսբիւրիին ուղղած հեռագրի մէջ հաշտութեան մասին, որ սակայն Սալիսբիւրին չընդունեց, պահանջելով անպայման անձնատուր լինել։

Կրիւգէրը և Շտէյնը գերմանական կայսրից ստացան հետևեալ հեռագիրը ի պատասխան իրենց դիմումին միջնորդելու համար.

«Գերմանական կայսրի կառավարութիւնը հաճութեամբ մասնակից կը լինի բարեկամական միջամտութեանը, երբ հաւաստիանայ, թէ այդ բանի համար հիմնական պայմանները գոյութիւն ունին, այսինքն թէ երկու հակառակորդներն ևս ցանկանում են նոյնը։ Կա՞յ արդեօք այդպիսի ցանկութիւն անգլիացիների կողմից՝ այդ մասին հարաւ-աֆրիկական կառավարութիւնը կարող է տեղեկանալ կամ անմիջապէս Լոնդոնում կամ մի այլ կառավարութեան միջոցով, որ ոչ մի շահ չունի Հարաւային Աֆրիկայում. այդպիսի կառավարութիւններ շատ կան Եւրոպայից դուրս, բայց Գերմանիան նոցա շարքում չէ։ Գերմանական կառավարութեան ամեն մի քայլը այդ գործում կասկած կը յարուցանէ, թէ նա ձգտում է մի այլ բանի և ոչ մարդասիրական նպատակների։ Անվստահութիւնը, որ միայն կը զօրեղանայ այդ հանգամանքից, չէ կարող, ի հարկէ, նպաստաւոր լինել խաղաղութեան գործին։ Հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների ցանկութիւնը, որ նոցա խնդիրքը միջամտութեան վերաբերմամբ հաղորդել նոյնպէս աւստրո-ունգարական և շւէյցարական կառավարութիւններին, որոնց շահերը Պրետորիայում պաշտպանում է գերմանական հիւպատոսը, հասկանալի է, որ անմիջապէս կատարուեց»։

Նիդերլանդական կառավարութիւնը Կրիւգէրի և Շտէյնի խնդրին միջամտութեան վերաբերմամբ պատասխանել է, թէ անգլիական կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնից յետոյ, որից պարզ երևում է միջամտութեան անկարելիութիւնը, նա, դժբաղդաբար, չէ կարող կատարել հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների ցանկութիւնը, սակայն այսուհետև ևս նա պատրաստ է աջակցել ամեն մի քայլի, որ ուղղուած կը լինի խաղաղութիւնը վերականգնելու գործին։

Հիւս. Ամերիկայի Միաց. Նահանգների պատասխանի մասին Տրանսվաալի արտաքին գործերի մինիստր Րէյց բացատրեց թղթակիցներին, թէ Տրանսվաալի կառավարութիւնը Միացեալ-Նահանգների պատասխանը շատ գոհացուցիչ է համարում։ Րէյց միևնոյն ժամանակ յայտնեց, թէ Վաշինգտոնի կառավարութիւնը իր ազդեցութիւնը գործ կը դնէ ի նպաստ խաղաղութեան այնպիսի պայմանների, որոնք ընդունելի կը լինեն և հանրապետութիւնների համար։ Ճանաչելով դրութեան լրջութիւնը՝ Րէյց ասաց, թէ համոզուած է, որ երկու հանրապետութիւնն ևս մինչև վերջը կը պաշտպանեն իրենց անկախութիւնը։

«Herald» լրագրի մէջ տպուած է հետևեալ հեռագիրը Պրետորիայից. «Կրիւգէր, քիչ ժամանակ առաջ խօսակցելով մի ժուռնալիստի հետ, ասաց. Թէ բուրերը պատերազմ սկսելուց յետոյ կամ կը յաղթեն կամ կը մեռնեն։ Ուրիշ ազգերից ես ոչ մի օգնութիւն չեմ սպասում, ասաց Կրիւգէր, բայց

ինձ ուրախացնում են համակրանքի և բարեկամութեան այն ապացոյցները, որ մենք ստանում ենք։ Տրանսվաալն ամեն բոպէ պատրաստ է խաղաղութիւն կնքելու, բայց ոչ մի դաշնադրութիւն այժմ ճանաչել չէ կամենում։ Միակ ելքը—անպայման անկախութիւնն է։

«Մենք նոր երկիրներ ձեռք բերել չենք կամենում. մենք գոհ ենք, երբ կարողանում ենք խաղաղ ապրել։ Խաղաղութիւն կնքելիս՝ Տրանսվաալը կը պահանջէ, որ Նատալի և Կապի գաղթականութեան աֆրիկանդէրները, որոնք այժմ զինակցում են մեզ, ճանաչւին պատերազմող կողմ և չկրեն ոչ մի նիւթական վնաս։ Երբ կառավարութիւնը իմացաւ, թէ Կապի աֆրիկանդէրներից մի քանիսը դատապարտւած են Կապշտադում, որպէս այնպիսի յանցաւորներ, ես հեռագրեցի Սալսբիւրին, որ եթէ նրանք չեն ճանաչւի իբրև պատերազմական գերիներ, մենք նոյն տեսակ կը վերաբերւենք դէպի անգլիական գերիները։ Սալիսբիւրին պատասխանեց որ եթէ մենք ձեռք կը տանք անգլիական գերիներից նոյն իսկ մէկին, նա պատասխանատւութիւնը կը ձգէ անձնականապէս ինձ վրայ։ Ես ենթադրում եմ, որ նա կամենում էր ասել, թէ անգլիացիները ինձ կը կախեն։ Այսպիսի սուր սպառնալիքներ չեն կարող յետ կանգնեցնել ինձ իմ պարտքը կատարելուց։ Տրանսվաալն այսօր պատասխանեց նրան, թէ մեր կառավարութիւնը արհամարհում է նրա սպառնալիքները։ Տարածւած լուրերը հարաւ-աֆրիկական հոլլանդացիների դաւադրութեան մասին ճիշդ չեն։ Օրանժեան հանրապետութիւնը դաշնադրութեամբ պարտաւորւեց օգնել մեզ։ Բուրերը Աստծու ձեռքումն են և Աստւած չի թողլ տալ, որ մենք կորչենք։ Մեր բոլոր ուժերը 40.000 են, բայց Աստուծու օգնութեամբ մենք կարող ենք յաղթել։ Մեր նշանաբանն է—մահ կամ ազատութիւն։ Ես պաշտպանում էի Տրանսվաալում բրիտանացիների գոյքը և կը շարունակեմ պաշտպանել այսուհետև ես։ Մեր հասկացողութեամբ Ամերիկան այս պատերազմում մեր կողմը պիտի լինի»։

Երբ Ռոբէրտսը գրաւեց Բլումֆոնտէնը, դիմումն արաւ օրանժեցի բուրերին անձնատուր լինել, զէնքերը վայր դնել։ Սկզբներում եղան անձնատուր լինողներ, բայց այդ շարժումը կանգ առաւ շուտով, և նոյն իսկ անձնատուր եղողների նկատմամբ հարկաւոր եղաւ զգուշութիւն բանեցնել։

Հեռագիրը մարտի 2-ից իմացրեց թէ Կրիւգէրը յայտարարեց, որ Օրանժեան հանրապետութեան երկիրը պատկանում է հարաւ-աֆրիկեան հանրապետութեանը։ Ինչ մտքով պիտի հասկանալ այդ—չըպարզւեց մինչև մարտի վերջերը։

Ռոբերտս հրատարակեց մի հրամանագիր զօրքի առաջ կարդալու համար, որի մէջ, ցոյց տալով այն նշանաւոր դէպքերը, որոնք տեղի ունեցան անգլիական զօրքերի Օրանժեան սահմանագիծը անցնելուց յետոյ և յիշատակելով բուրերի զօրքի մեծամասնութեան գերի առնւելը յարգելի

գեներալի հետ, շնորհաւորում է զօրքի կատարած քաջագործութիւնները, որոնցով ամեն մի զօրք կարող է պարծենալ։ Ռոբերտս ապա գովում է զինուորների դիմացկանութիւնը և այն հերոսական համբերութիւնը, որով վիրաւորուածները տանում են իրենց տանջանքները։

Հարաւային Աֆրիկայի բոլոր հիւանդանոցներում մարտի սկզբներում կային 17.000 հիւանդներ և վիրաւորներ։

Կրոնշտադի բուրական զօրքերը քաջարի կերպով սպասում են առաջ արշաւող անգլիացիներին։ Կրիւգեր դիմեց բուրգերներին մի կրակոտ ճառով, որով հրաւիրում է նոցա յամառ լինել ազատարար պատերազմի մէջ։ «Եթէ—ասում է նա—անգլիացիները այժմ իրանց ձեռքերում ունին Բլումֆոնտէնը, այնու ամենայնիւ, հայրենիքի ազատութիւնը հաւանականօրէն վերջ ի վերջոյ կը պահպանւի»։ Շտէյն նոյնպիսի մի ճառ արտասանեց և ասաց բուրգերներին, որ նոքա չըհաւատան Ռոբէրտսի պրոկլամացիային՝ զէնքերը վայր դնելու մասին։ Երկու ճառերը բուրգերների մէջ սաստիկ ոգևորութիւն առաջ բերին։

Ռոդեզիան (անգլիական երկիր, Տրանսվաալի հիւսիսային կողմում, կցած անգլիական Կապի երկիրների հետ) պաշտպանելու համար գեներ. Կարինգտոնի հրամանատարութեամբ սկսեց կազմակերպուել 5 հազարից բաղկացած մի գունդ, որպէս զի արգելք լինի բուրերի արշաւանքին դէպի հիւսիս։

Գեն. Կիչնէրը պատրաստւում է իւր զօրաբաժնով բուրերից պաշարուած Մեֆկինգ քաղաքը ազատելու։ Կիչնէրը գրաւեց Պրիսկոն։ Ռոբէրտսի պրոկլամացիայի դէմ՝ Օրանժ. հանրապ. նախագահ Շտէյնը նոյնպէս յայտարարութիւն տւեց, որով սպառնում է հրացանի բռնել դաւաճանութեան համար այն օրանժեցիներին, որոնք չեն կռւի անգլացոց դէմ։

Բազուտոսների (անգլիական) երկրի սահմանի վրայ սկսւում է բուրերի ապստամբութիւնը։

Բուրերը կործանում են երկաթուղային կամուրջը, որ ձգւած է Մոդդէր գետի վրայ, մօտ 14 մղոն դէպի հիւսիս Բլումֆոնտէնի և Բրադֆորտի մէջտեղում։

Թայմս՚ին Լորէնցօ-Մարքէզից մարտի 9-ից հեռագրում էին թէ լուրերին նայելով՝ բուրերի մէջ քննւում է Տրանսվաալը և Օրանժեան հանրապետութիւնը միացնելու խնդիրը, այնպէս որ Կրիւգէրը լինի նախագահ, Շտէյնը՝ զօրքերի ընդհանուր հրամանատար։

Անգլիացիք գրաւեցին Ռուքսւիլ և Սլիտֆիլդ։

Բուրերը մարտի 9-ին գեն. Օլիւիէյի հրամանատարութեամբ ջարդեցին գեներալ Հատէկրին Բետուլիայի մօտ։ Անգլիացիները չետ են մղւած մեծ կորուստներով։ Շատ անգլիացիներ գերի են առնւած։

Կրիւգէրը, մարտի 9-ին, վերադարձաւ Պրետորիա՝ Օրանժեան հանրապետութեան երկրից։

Ֆրէնչ՝ հեծելազօրքի մի բրիգադով և հեծեալ հետևակներով Բլում-ֆոնտէնից գնաց Տաբանչու, որ գտնւում է Բլումֆոնտէնի և Լէդի-Բրանդի մէջտեղում։ Այստեղ նա հելիօգրաֆիական հաղորդակցութիւն սկսեց Մասսարուի հետ։

(Բուրերը յայտնել են յաճախ որ անգլիացիք գործ են ածում նաև դում-դում կոչւած գնդակներ, որ նոքա գտել են անգլիացի գերիների մօտ։ Այդ առիթով Անգլիայի համայնքների ժողովում հարցապնդում եղաւ մարտի 11-ին։ Զինուորական մինիստրի օգնական Ուինդհէմ յայտնում է, Հարաւային Աֆրիկայում զօրքերի գործածական գնդակները «2» նշան են կրում և միաձոյլ կազմ ունին, իսկ «5» նշանով գնդակները յետ են առնւած և երբէք չեն գործածւել պատերազմում։ Նոյնպէս քիչ են գործածւած «դում-դում» գնդակները։ Գիլլոնի հարցին, թէ ճշմարիտ է արդեօք, որ Հարաւային Աֆրիկա են ուղարկւած «4» նշանը կրող գնդակները, այսինքն դատարկ ծայր ունեցող պայթուցիկ գնդակներ, Ուինդհէմ պատասխանեց, թէ այդպէս չէր կարող լինել։ «4» նշանը կրող գնդակը պաշտօնական գնդակ է. նա սկզբում բաժանւեց Կապի զօրքերին, բայց յետոյ յետ առնւեց և պատերազմի մէջ գործ չըդրւեց։ Գիլլոնի հարցին, թէ ուղի՞ղ է արդեօք, որ այժմ զօրքերի ձեռքին կան «4» նշանը կրող գնդակներ։ Ուինդհէմ ասում է, թէ նոքա յետ են առնւած։ Գիլլոնի հետևեալ հարցին, թէ յետ բերւած են արդեօք այդ գնդակներն Անգլիա՝ Ուինդհէմ պատասխանում է. «չըգիտեմ»։

Գրիկուատաունը նորից գրաւում են բուրերը, որոնց դէմ մարտի 13-ին Կիմբէրլէյից մի անգլ. զօրաբաժին ճամբա ընկաւ։

Բուրերը, 400 հոգի, նորից գրաւեցին Պապկիւլ և հարկադրեցին Հերբէրտեան շրջանի ապստամբներին միանալ իրենց հետ։

Մարտի 11-ին Օլիւիէն (բուր) մեծ զօրաբաժնով և 15 թնդանօթներով գնում էր Լէդիբրանդից դէպի հիւսիս։

Բուրերը սաստիկ ամրանում են Վապէրէնի անցքում (Նատալ) ծանր թնդանօթները տեղաւորելով բարձրութիւնների վրայ։

(Մարտի 15-ին Անգլիայում, կայացաւ ազատամիտների միութեան ժողովը։ Ներկայ էին 1200 պատգամաւորներ։ Ընդունւեց մի որոշումն, որ կրկնում է ընդդիմադիր կուսակցութեան յայտարարութիւնները պարլամէնտում, այսինքն, թէ կառավարութեան քաղաքականութիւնը Հարաւային Աֆրիկայի վերաբերմամբ ունի այն պակասութիւնները, որ անտեղեակ է գործերի դրութեանը, հեռատես չէ և զուրկ է արդարութեան զգացմունքից։ Այս որոշման մէջ ընդունւած է, թէ ուիտլէնդէրների գանգատները իսկապէս գոյութիւն ունին։ Յետոյ անհրաժեշտ է ճանաչւած միջոցներ ձեռք առնել, որպէս զի բուրերը ապագայում չըկարողանան զինւորւել, բայց միևնոյն ժամանակ ցանկութիւն է յայտնւում, որ վիճելի հարցը լուծ-

ւի բաւարար կերպով, ի նկատի առնելով ազգաբնակութեան ցանկութիւնները և Հարաւային Աֆրիկայի բոլոր մասերին տուել այնպիսի ընդարձակ ինքնավարութիւն, որը միայն կարելի է հաշտեցնել խաղաղութեան և ապագայ բարօրութեան հետ։

Բուրերը, ետ քաշւելով Լէդիսմիթից, այնուամենայնիւ իրենց ձեռքին պահեցին Դրակոնեան լեռների անցքերը։ Այդ անցքերը 9 հատ են, որ, մարտի 14-ից ղրկած տեղեկութեան նայելով՝ բռնել են 2 հազար օրանժեան բուրեր։

Անգլիացիք գրաւում են Էգէրսֆոնտէն և Ֆօրսմիթ առանց ընդդիմադրութեան։

Բուրերը ոչնչացնում են ածխահանքերը Նատալում, մտածելով որ դոքա կարող են օգտակար լինել անգլիացիներին, եթէ նոքա նորից տիրանան։

Բուրերի Գրոբլէր և Օլիւիէ զօրավարները առաջ են գնում միանալու գեն. Դեւէտի հետ։

ԺՈՒԲԷՐԻ ՄԱՀԸ։ Մարտի 15 (27)-ին վախճանւեց բուրերի գլխաւոր հրամանատար գեներալ Ժուբէրը, խորին սգի մէջ գցելով Տրանսվաալցիներին։ Նա անկեղծ հայրենասէր էր, քաջ գեներալ և ազնիւ մարդու համբաւ ունէր։ Պետրոս-Յակոբ (=Պիտէր-Յակոբ) Ժուբէր ծնւեց 1834 թ. Կապի գաւառի մէջ Կանգօյում և ծագում էր մէկից այն բողոքական (հուգենոտ) ընտանիքներից, որոնք գաղթեցին Կապ 17-րդ դարի վերջը։ Երբ, նեղւած անգլիացիներից, բուրերը գաղթեցին աւելի դէպի հիւսիս, Ժուբէրի հայրը նոցա մէջն էր։ Ժուբէրը եղած է արդարադատութեան մինիստր և տեղապահ եղաւ նախագահ Բուրգէրս՚ին, երբ սա Անգլիա ուղեւորւեց. յետոյ Ժուբէրը Կրիւգէրի հետ եկաւ Անգլիա՝ որ սա վերադարձնի Անգլիային անկախութիւնը, երբ 1877-ին Անգլիան յայտարարեց Տրանսվաալը բրիտանական երկիր։ Շուտով յետոյ պատերազմ եղաւ բուրերի հետ, որոնց գլխաւոր հրամանատարը եղաւ Ժուբէրը։ Մաջուբա լերան մօտ տարած յաղթութիւնը 1881-ին անգլիացի Ջորջ Կոլլէյի վրայ՝ հռչակեց նորա անունը։ Հակառակ ծայրայեղ-պահպանողական Կրիւգէրի՝ Ժուբէրը կուսակից էր ռեֆորմների։ Երբ Կրիւգէրը առաջին անգամ իւր թեկնածութիւնը դրեց նախագահութեան համար—Ժուբէրը նորա մրցակից հանդիսացաւ. Կրիւգէրը երկու անգամ աւելի ձայն ստացաւ, բայց այդ չխանգարեց որ Կրիւգէրը ապա Ժուբէրին զօրքերի գլխաւոր հրամանատար նշանակէր։ Ներկայ պատերազմի մէջ նորա ղեկավարութեամբ եղան բոլոր նախապատրաստութիւնները և մշակւեց սկզբնական ծրագիրը պատերազմի, նպատակ դնելով դուրս քշել անգլիացիներին Նատալից, գրաւելով նախ Լէդիսմիթ։ Նա պէտք է որ վիրաւորւած լինէր ռմբի մի կտորից, իսկ ապա հիւանդացաւ և վախճանւեց ստամոքսի հիւանդութիւնից։

Գեն. Սմուտս, որպէս լսւեց, նշանակւեց տրանսվաալեան բուրերի գլխաւոր հրամանատար, (վախճ. Ժուբէրի տեղ)։

Գեն. Լուդովիկ Բոտա տրանսվաալեան կառավարութիւնը նշանակեց Տրանսվաալի բոլոր զօրքերի հրամանատար։

Բուրերը, Օլիվիէի հրամանատարութեամբ, մտան Լէդիբրանդ և ամուր դիրք գրաւեցին Պլանտբէրգի և Մոդդէրսպորտի շուրջը։

(Զինւորական հրացանաձիգների ժողովում, Լոնդոնում, նախագահող լորդ Ուոլսլէյ գովասանական ճառ արտասանեց Կարդուէլլին, որը մտցրեց զինւորական այնպիսի սիստեմ, որի շնորհիւ անհնարին կը լինէր պատերազմ շարունակել։ Ուոլսլէյ շեշտում էր միլիցիայի նշանակութիւնը, որը միայն հնարաւորութիւն տւեց կազմակերպել ներկայումս հարաւային Աֆրիկայում պատերազմող զօրքը։ Միլիցիան պատերազմի սկզբից տւեց կանոնաւոր զօրքերին 900 օֆիցէր և 30 բատալիօն միլիցիա, որոնք ինչպէս յայտնի է, ներկայումս դրօշակի տակ կանգնած են Աֆրիկայի հարաւում։ Հռետորին շատ լաւ յայտնի է, որ արտասահմանում կարծում են, իբր թէ Անգլիան մերկացած է զօրքերից, այն ինչ զօրանոցները երբէք այնպէս լի չեն եղել, ինչպէս ներկայումս։ Զէնքի կարող է կանչել էլի 50 բատալիօն միլիցիա զօրք, բայց զօրքերի մի այդպիսի թւի համար տեղ չկայ։ Այդ զօրքերը կը կանչեն, հէնց որ եղանակը հնարաւորութիւն կը տայ նոցա զետեղելու)։

(Կոտտինգամում, Անգլիա, ազատամիտ դաշնակցութեան ժողովում գլխաւոր հռետոր Էդուարդ Գրէյ այն կարծիքը յայտնեց թէ Կրիւգէրի խաղաղութեան առաջարկութիւնները իրենց թէ ոգւով և թէ տառով այնպիսի չէին, որոնց կառավարութիւնը կարողանար արձագանք տալ։ Համայնքների ժողովը կը շարունակի պաշտպանել կառավարութիւնը։ Հռետորը չէ հաւատում, թէ հնարաւոր կը լինի արձակել համայնքների ժողովը մինչև որ հարաւ-աֆրիկական հանրապետութիւնները չնւաճւեն կամ չը յաղթւեն)։

Վարէնտոնի մօտ (Կիմբերլէյի մօտերքը) մարտի 15-ին կռիւ եղաւ, ուր սպանւեցան շատ ձիեր և անասուններ։

(Կրիւգէր Պրէտորիայում մի խօսակցութեան մէջ «World» լրագրի թղթակցի հետ ասաց, թէ որքան ճշմարիտ է այն, որ կայ արդարադատ Աստւած, այնպէս էլ ճշմարիտ է և այն, որ Տրանսվաալի դրօշակը յաղթող կը հանդիսանայ։ Երեք ամիս անցնի, թէ մի տարի, այդ միևնոյն է, բայց ուրիշ ելք անհնարին է։ Նախագահը աւելացրեց, թէ Տրանսվաալը գրաւ չի դնի ոչ մի ստացւածք. հանքերը նոյնպիսի ապահովութեան մէջ են, որպէս և իրենց տէրերի ձեռքում։ Վերջում Կրիւգէր ասաց, որ եթէ լուսնի վրայ էլ ապրէին մարդիկ, նա չի կարող երևակայել, թէ Ջոն-Բուլը ցանկութիւն չունենայ նրանց միացնել իրան։

(Օրանժեան նախագահ Շտէյնը իր մի շրջաբերականում՝ ընդդէմ Ռոբէրտսի պրոկլամացիայի, յայտնում է թէ Անգլիայի քաղաքականութիւնը Աֆրիկայում իր հակառակորդների վերաբերմամբ հետևել է divide et impera (=բաժանիր՝ որ տիրես) սկզբունքին։ Պատերազմի սկզբում Անգլիան փորձ արեց իր կողմը գրաւելու Օրանժեան հանրապետութիւնը, որպէս զի բաժանէ նրան Տրանսվաալից և այդպիսով հեշտացնէ իր համար երկու հանրապետութիւնների միացումը։ Իշխանաւորները երբէք չեն մոռացել բուրգէրներին։ Այժմ թշնամին աշխատում է նոցա բաժանել, պարգևներ տալով դաւաճաններին և վախկոտներին։ Կայքերի ամօթալի քայքայումը Յակոբսթալում և բուրերի ձերբակալութիւնը Բլումֆոնտէնում ցոյց են տալիս, թէ ինչ հաւատ կարելի է ընծայել անգլիական խոստումներին։ Մայրաքաղաքը թէպէտ և գրաւած է թշնամուց, բայց և այնպէս պատերազմը տանուլ տուած չէ. ընդհակառակը ներկայ ժամին պէտք է ամենամեծ արիութիւն ցոյց տալ)։

Բուրերի մի զօրաբաժին 6000 հոգով հասաւ Սմալսի.

Անգլիացիք մարտի 16-ին յետ մղեցին բուրերին՝ Բրանդֆոնտէնից երեք մղոն հեռու գտնուող Կարրի կայարանի մօտ բլուրներից. անգլիացիք կորցրին 19 սպանուած և 159 վիրաւոր, բացի այդ սպանուեցին 2, վիրաւորուեցին 8 օֆիցէր։ Անգլիացիք դորանով գրաւեցին մի լաւ դիրք, ուստից կարելի է տեսնել հեռու տարածուող դաշտավայրը. Կռւող բուրերի թիւը անգլիացիք հաշւում էին 2-3 հազար մարդ։

(Օրանժեան կառավարութիւնը վերացրեց «Օրանժեան հանրապետութեան երկաթուղիներ» անունը, կոչելով նոցա «պետական զինւորական ճանապարհ» անունով).

(Անգլիայի թագուհի Վիկտորիա, ուղեկցութեամբ Շլէզվիգ-Հոլշտէյնեան պրինցուհու և Բատտէնբէրգեան Բէատրիսա պրինցուհու, մարտի 20 (1 ապր.) Վինձորից ճանապարհ ընկաւ Իրլանդիայի մայրաքաղաք Դուբլինը).

Կռիւը Կրոնշպրույտի մօտ. բուրերի յաղթութիւնը։ Բլումֆոնտէնի և Տաբանչուի միջերքը տեղի ունեցաւ կռիւ, որը վերջացաւ անգլիացոց պարտութեամբ։ Անգլիացոց հրամանատարն էր գնդապետ Բրոդվորդ, բուրերինը՝ Օլէվիման, Գէն. Ռոբէրտսը իւր աւելի ուշ հեռագիրներից մէկում գործը ներկայացրեց այս կերպ. գնդապետ Բրոդվորդ տեղեկացրեց Ռոբէրտսին, թէ թշնամին երկու զօրաբաժիններով արշաւում է հիւսիս-արևելքից Տաբանչուի վրայ և որ նա, Բրոդվորդ, դիտաւորութիւն ունի յետ քաշել դէպի ջրանցքը, որը գտնւում է 17 մղոն աւելի մօտ Բլումֆոնտէնին։ Ռոբէրտս պատասխանից, թէ լուսաբացին օգնութիւն հասցնելու համար կուղարկի իններորդ դիվիզիան։ Գիշերը Բրոդվորդ յետ քաշեց դէպի ջրանցքը և այնտեղ բանակ դրեց։ Շաբաթ, լուսաբացին, Բրոդւորդ յարձակման ենթարկուեց երեք կողմից։ Նա ուղարկեց իւր բատարէները և

բեռնաւորուած սայլերը, հեծեալ զինւորների պաշտպանութեամբ, Բլումֆոնտէնի ուղղութեամբ։ Ջրանցքից երկու մղոն հեռու ճանապարհը գնում է առ լի չեղ դէպի գետի խորը, խոր փաշտի մինչև, ուր բուրերը գիշերւայ ընթացքում այնպէս լաւ էին թագնել, որ անգլիական խուզարկուները, մօտից անցնելով, չը նկատեցին նոցա։ Երբ ֆուրգոնները և Թնդանօթները անցնում էին այդ տեղով, բուրերը կրակ բացին։ Ամենից առաջ գտնւող զինւորները և ձիերը սպանւեցին. իսկ գործերի մնացած մասը շտապով հեռացաւ այդ տեղից։ Տեղեկութիւն ստանալով Բրոդւուդի նեղ դրութեան մասին, Ռոբէրտս հրամայեց Փրէնչին գնալ իններորդ դիւիզիայի օգնութեան։ Կէսօրից յետոյ 2 ժամին իններորդ դիւիզիան հասաւ պատերազմի տեղը։ Թշնամու թիւը համարւում էր 8,000—10,000 մարդ Թնդանօթներով, որոնց թիւը յայտնի չէ։

Բուրերը այդ կռւի մէջ վերցրին վեց Թնդանօթ և 200 սայլ մթերքներ։

«Բէյտէրի գործ.» Թղթակիցը Բրանդֆոնտէնի մօտ գտնւող բուրերի բանակում հաղորդում է մանրամասնութիւններ անգլիացիների համար սարքած դարանի մասին։ Մի սայլի մէջ գտնւում էին անգլիական երկու օֆիցէրներ. բուրերը ձայն տւին և առաջարկեցին անձնատուր լինել։ Այդ օֆիցէրներից մէկը հնազանդւեց, որի պատճառով միւսը սպանեց ընկերոջը, և որովհետև նա չէր կամենում անձնատուր լինել, այդ պատճառով բուրերը նորան հրացանազարկ արին։ Բռնւած գերիները և Թնդանօթները ուղարկւեցին Վինբուրգ։ Բուրերը կորցրին 3 սպանւած և 10 վիրաւորւած, նոքա գերի վերցրին 389 հոգի։ Բուրերը պաշարեղէնների պակասութիւն էին զգում, բայց անգլիական սայլախումբը փրկելու րոպէից նոքա պաշար շատ ունին։ Բացի դորանից, բուրերի ձեռքն ընկան անգլիացիների բոլոր գաղտնի Թղթերը, որոնց Թւում Օրանժեան հանրապետութեան և Տրանսվաալ խուժելու վերաբերւող Թղթերը, նոյնպէս և Բլումֆոնտէնից դէպի Կրոնշտադտ արշաւելու նախագիծը։ Բուրերը նոյնպէս խլեցին մի արկղ, որի մէջ պահւում էին այն դոկումէնտները, որոնք վերաբերւում էին բուրգէրների երդմանը, որով պարտաւորւել էին չպատերազմել անգլիացիների դէմ։ Այդ բուրգէրներին առաջարկւած է այժմ գալ Կրոնշտադտ, գլխաւոր բանակը, ուր այնտեղի հրամանատար գեներալը կը բացատրի նոցա, որ նոցա երդումը վաւերական չէ, որովհետև ստիպել են նոցա։

Կրոնսպրույտի մօտ անգլիացիների կորուստի պաշտօնական ցուցակը ցոյց է տալիս 3 սպանւած, 80 վիրաւորւած, որոնցից 5-ը մեռան, և 352 անյայտ կորած։

Կապշտատից ապրանքակիր «Ձիկագօ» նաւը ճամբա է ընկնում դէպի Բէյրա. նորա վրայ գտնւում են աւստրալիական կորպուսի մի մասը, ձիեր, ջորիներ և Ռոդէզիայի երկաթուղու համար կարևոր նիւթեր։ Բէյրա է ղրկւում նոյնպէս շատ ռազմամթերք և պաշարեղէն։

Բլումֆոնտէնի ջրանցքը բուրերի ձեռքումն է. Ջրանցքի մօտ կռւի մէջ մարտի 20-ին անգլիացիք կորցրին 3 սպանուած և 14 վիրաւորուած օֆիցէրներ։

Բուրերի վերջին գործողութիւնների մասին «Թայմսին» հեռագրում էին մարտի 20-ից. «Թշնամու շարժումը ցոյց է տալիս, որ նա այժմ ոգևորուած է. միևնոյն ժամանակ դա ապացոյց է, որ Օրանժեան հանրապետութեան հիւսիսային մասում բուրերը աւելի բազմաթիւ են քան ենթադրում էր։ Օլիվիէի գործողութիւնները, որ նորից գնաց դէպի արևելք և գրաւեց Վէդդի-Բրանդ, իսկ յետոյ, հաւաքելով իր մօտ օգնական զօրքեր, տիրեց Տաբանչուին, ռազմագիտական «գլուխ գործոցներ» էին, որոնցից նա կարողացաւ օգուտ քաղել Ռոբերտսի զօրքերի տեղաւորման միակ թոյլ կէտից։ Այս հանգամանքը ցաւալի է գլխաւորապէս այն տեսակէտից, որ մենք անընդունակ գտնւեցինք կատարելապէս պաշտպանել հանրապետութեան հարաւ-արևելեան մասում այն ագարակատէրերին, որոնք արդէն յանձնել են իրենց զէնքերը։

(Գերի վերցրած գեն. Կրօնյէ, գնդապետ Շիլ և 1.000 բուր մարտի 21-ին ղրկւեցին Ս. Հեղինէ կղզին)։

Կրիւգէրի հրամանով 20 մարտի Յոհաննէսբուրգի, Բոկսբուրգի և Կրիւգերսդորպի բոլոր անգլիահպատակները 48 ժամում պէտք է թողնէին Տրանսվաալի սահմանը. Մնացած ընտանիքաւորները նոյնը պիտի անէին մինչև մարտի 23-ը. այդ հրամանը չէր վերաբերում բրիտանական այն հպատակներին, որոնք աշխատում են պետական հանքերում։

(Օրանժեան հանրապետութեան ֆոլկսրատում որ այժմ նիստեր ունի Կրօնշտադտի մէջ, Շտէյն յայտնեց թէ ինքը չէ հրաժարւել յոյսից, որ յաղթանակ կը տանեն բուրերի հանրապետութիւնները։ Յետոյ սրտագին խօսքեր նուիրելով Ժուբէրին, Շտէյն աւելացրեց թէ անգլիացիների կողմից եղել են Կարմիր Խաչի դրօշակի կանոնները խախտելու փաստեր և այդ մասին ինքը յայտնել է չէզոք պետութիւններին։ Ռոբերտս իր պրոկլամացիայի մէջ փորձել էր երկպառակութիւն սերմանել բուրերի մէջ, բայց այդ չաջողւեց։ Յիշատակելով այնուհետև Սոլսբիւրիի հետ ունեցած գրագրութիւնը։ Շտէյն ասաց, որ ինքը ոչ միայն ջանքեր է գործադրել, այլ և Եւրոպա ու Ամերիկա պատգամաւորութիւններ է ուղարկել՝ չէզոք պետութիւնների վրայ ազդելու և արիւնահեղութիւնը դադարեցնելու համար։ Նա յոյս ունի և ջերմապէս ցանկանում է, որ այդ ջանքերը աջողութեամբ պսակւեն։ Ի վերջոյ Շտէյն յայտնեց թէ Օրանժեան հանրապետութեան կառավարութիւնը ժամանակաւոր փոխառութիւն է կնքել Տրանսվաալում)։

Մարտի 22-ին գեն. Կլեմէնսի զօրաբաժինը, 6000 հոգուց, անցաւ Բլումֆոնտէնի միջով և ժամանակաւորապէս բանակ դրեց քաղաքից 5 մղոն հեռու հիւսիսակողմը։

*Պրետորիայից տեղեկութիւնների համեմատ, Ջրանցքի մօտ և ամկալի մէջ Բլումֆոնտէնի մօտ, մարտի 20-ին, անգլիացիք կորցրին 11 թնդանօթ և երկու ֆուրգոն ռազմամթերք։*

Անգլիացոց 5 ռոտաների գերիլը Ռիդերսբէրգի մօտ։ *Այս գործը խաղացւեց մարտի 21-ից կէսօրից յետոյ մինչև 22-ի առաւօտեան 9 ժամը։ Ռիդէրսբուրգի մօտ բազմաթիւ բուրեր կային 5 թէ 6 թնդանօթներով. նոքա յանկարծուստ շրջապատեցին անգլիական հետևակների երեք ռոտա և հեծեալ հետևակների երկու ռոտա. (ռոտա'ն բատալիոնի=վաշտի մասն է)։ Պաշարման մասին երեկոյեան 21-ին Ռոբէրտսը տեղեկութիւն ստացաւ և իսկոյն հրամայեց գեն. Հատէկր'ին ամենամեծ արագութեամբ Սպրինգֆոնտէնից գնալ դէպի Ռիդեբսբէրգ. բացի այդ, նա ղրկեց Կամերոնեան լեռնականներին Բետանիա։ Հատէկր տեղ հասաւ միայն առաւօտեան $10^1/_2$ ժամին, երբ արդէն ուշ էր։ Հինգ ռոտաները յանկարծուստ բռնւեցին, երբ Սմիթֆիլդ էին գնում Դեւէտսդորպի վրայով։*

Բուր գեն. Դեւէտի յաղթութիւնը։ *Բրանդֆորտից այդ գործի մասին մարտի 20-ին հեռագրեցին հետևեալը (բուրական աղբիւր).*

*«Մարտի 19-ին Դեւէտի բանակից ստացած հեռագիրը հաղորդում է, թէ ուրբաթ գիշեր Դեւէտը տեղեկութիւն ստացաւ, որ Տաբանչուն քիչ ժամանակ առաջ գրաւող անգլիական զօրքերը հեռանում են այդ տեղից։ Որովհետև Օլիւիէն եւս մօտենում էր հարաւից՝ Դեւէտը վճռեց բռնել նոցա և գիշերային շատ ուղևորութիւնից յետոյ՝ հասաւ Ամլա բլրին, որ գտնւում է ուղիղ Ջրանցքի մօտ։ Մոդդէր գետի հիւսիսակողմում նա գտաւ անգլիական բանակը առանց առաջաւոր պահակների, խաղաղ քնի մէջ։ Դեւէտը իսկոյն թնդանօթները դրեց դիրքերի վրայ, 1.500 մարդով գրաւեց անգլիացիների շուրջը գտնւող ռազմական կէտերը։ Կրոնշտադի և Բլումֆոնտէնի զօրաբաժինները տեղաւորւեցին երկաթուղային կայարանի և գետի ծանծաղուտի մօտ։ Երբ բաւականաչափ լուսացաւ, նշան տւեց և թնդանօթներն սկսեցին գնդակների կարկուտ թափել անգլիացիների վրայ։ Անգլիացիք սաստիկ շփոթւեցին։ Թնդանօթաձիգները վազեցին դէպի իրենց թնդանօթները և հեռաւոր դիրքերը։ Այդ բանը ուրախութեամբ ընդունւեց Վինբերգի և Բեթլեհէմի զօրաբաժիններից. նոքա վազեցին բաց դաշտի միջով դեռ ևս չսթափւած անգլիացիների հրացանաձգութեան կարկուտի տակ։ Դեւէտը ոգևորեց մարդկանց և առանց կցորդների, ձիով, բաց դաշտի միջով գնաց դէպի անգլիական դիրքերը։ Այդ ժամանակ անգլիական բատարէյը արագութեամբ անցաւ դէպի այն դիրքը, որ գրաւել էին բուրերը։ Ոչ մի գնդակ չարձակւեց, մինչև որ անգլիացիների և բուրերի միջև 30 եարդ տարածութիւն մնաց։ Բայց այնուհետև օդը թընդաց հրացանների միացած արձակման դղրդոցով։ Ձիերի շարքերը մէկը միւսից յետոյ հնձւեցին ինչպէս խոտ։ Եօթ թնդանօթներ ընկան Օրանժեան բուրերի ձեռքը։*

Մի այլ հեռագիր Բրադֆորտից Նոր տոմ. ապր. 8-ից յայտնեց. «Դեւէտ երէկ ջարդեց անգլիացիներին Մերկանտսֆոնտէնի մօտ. 600 անգլիացի սպանուած և վիրաւորուած են, 900 հոգի գերի տարուած. գրաւուած են 12 սայլ. բուրերի կողմից սպանուած են 5 և վիրաւորուած 9 հոգի։

Վէպէրէնը, (Նատալում!) ուր անգլիական գարնիզոն կայ, պաշարուեց բուրերից, տաք կռւից յետոյ, մարտի շուրջ 25-ին. գարնիզոնը բաղկացած է 400 հոգուց. անգլիական ամրութիւնները, սակայն, շատ ամուր են և գարնիզոնը քաջօրէն ընդդիմադրում է։ Գեն. Կիչնէր, Ալիւալպորտ գալով՝ հաղոր դակցեց (երևի հելիոգրաֆով) գարնիզոնի հետ և յոյս տուեց որ շուտով նորա վիճակը կը փոխուի։

Մեֆկինգը, որ շարունակում է բուրերից պաշարուած մնալ, յաճախ ենթարկւում է ռմբակոծումների։ Մարտի 14-ին բուրերը ռմբակոծեցին այն 7 թնդանօթներից. այդ ամենազօրեղ ռմբակոծումն էր Մեֆկինգի պաշարման օրից ի վեր։ Պաշարուածները, սակայն, միշտ յաջողութեամբ ետ են մղում բուրերի յարձակումները։

---

Եզրակացութիւն։ Կրօնջէին ու նրա զօրքը գերի վերցնելովը ու ապա Օրանժեան հանրապետութեան մայրաքաղաք Բլումֆոնտէնը վերցնելովը՝ այն տպաւորութիւնը ստացւեց, թէ անգլիացիք անվկանդ պիտի առաջ գնան նոյն իսկ մինչև Տրանսվաալի մայրաքաղաք Պրետորիան։ Բուրերը, սակայն, հերքեցին այդ չար գուշակութիւնները. Կրիւգէրը և Շտէյնը հաշտութիւն էին առաջարկում բայց միաժամանակ աներկբայելի խօսքերով հասկացնել էին տալիս որ դժւար պիտի լինի իրենց յաղթելը և որ նոյն իսկ վերջ ի վերջոյ յաղթելու յոյսերն ունին։ Իրողութիւնը այս եղաւ, որ Ռոբէրտսը ոչ միայն չկարացաւ առաջանալ, այլ և շուտով համոզւեց թէ որքան դժւար կացութեան մէջ է, և նոյն իսկ ինքը Բլումֆոնտէնը ապահով վիճակի մէջ չէ, և բուրերը նոյն իսկ աշխատում են կտրել Ռոբէրտսի բանակը անգլիական միւս զօրքերից, որ ի հարկէ, դժւար թէ յաջողւի։ Բայց մարտի դէպքերը դարձեալ խօսում են յօգուտ բուրերի ուժի, ճարպիկութեան, անվեհերութեան, մեծ պատրաստութիւնների, ծրագիրներ կազմելու կարողութեան, իրենց զօրավարների պատւականութեան։ Անգլիական գեներալների անպատրաստութիւնը, ընդհակառակը, այնքան ակներև է դառել, որ Ռոբէրտսը ստիպուած է նոցանից շատերին փոխելու. գեն. Հատէկր արդէն Անգլիա է ղրկւում, և բրիգադային գեներալներից շատերի համար սպասում են նոյնպիսի կարգադրութիւն։ Այժմ անգլիացիք գործ ունին նաև ապստամբութիւնների հետ Կապի երկրում և ունին նաև Ռոդեզիան պաշտպանելու հոգսը։ Դրա համար հարկ եղաւ, որ անգլիացիք զօրք անցկացնէին պորտուգալական հողի վրայով (Բէյրա նաւահանգստով), մի հանգամանք, որ միջազգային խնդրի տեղիք տուեց։ Պոր-

տուգալեան Տրանսվաալին պատասխանեց թէ այդ թոյլտուութիւնը փակել է Անգլիայի հետ ունեցած դաշնագրի զօրութեամբ—ինչ և է, բայց անգլիացիների առաջանալը ամենամօտ ապագայում դեռ ևս չի սպասւում։ Տրանսվաալը դեռ ևս կատարելապէս ազատ է, նա, յամենայն դէպս սաստկապէս ամրացնում է Պրետորիան և պատրաստում է Յոհաննեսբուրգը, ոսկու հանքերով հանդերձ, օդը ցնդելու, հէնց որ անգլիացիներին յաջողւի առաջանալ։ Օրանժեան երկիրը, թէև մի մասով բռնուած է անգլիացիներից, բայց մնացած մասերը բաւականին ամրացրած են; իսկ նոր մայրաքաղաք Կրոնշտադը իրեն լաւ պաշտպանուած է զգում։

Մարտի վերջերքը Եւրոպա հասաւ երկու հանրապետութիւնների մի պատուիրակութիւն անշուշտ դրդելու Եւրոպան՝ միջնորդութիւն անելու։

Մեր կարծիքը պատերազմի մասին։ Մինչև այժմ մենք ամենայն անաչառութեամբ արձանագրում էինք պատերազմական գործողութիւնները, ձգտելով միմիայն ճշդութիւն պահպանելու, արձանագրելով նաև հասարակական ցոյցերը երկու կողմից թեր և դէմ կռւող ուժերի։ Մենք մեր կարծիքը այս պատերազմի արդարութեան մասին վերապահում էինք, մինչև որ կ՚ճանաչէինք բուրերին, ոչ թէ հիմնուելով կանխակալ գաղափարների, այլ բուրերի ներկայացրած իրական արժէքի վրայ։ Մենք չենք կասկածում, որ եթէ մի ազգի արժէքը պիտի դատուի նորա ներքին կեանքով, բայց պատերազմի մէջ ազգի արժէքների համագումարը ձգտում ունի երևան գալու պայծառօրէն։ Բուրերի ներքին կեանքը մեզ դեռ ևս քիչ է յայտնի, բայց նորա վարած պատերազմը իր անկախութեան համար բաւականին լաւ ճանաչեցրինք այս վեց ամսում։ Մեր տպաւորութիւնը սա է, որ բուրերը մի ցեղ են ներկայացնում, որի անկախ զարգացումը վաստակ է մարդկութեան համար, և այնպէս, որ որքան էլ անգլիացիք ծրագրեն լայն ինքնավարութիւն տալու բուրերին, յաղթելու դէպքում, բայց այդ ինքնավարութիւնը, զրկելով բուրերին զինուորուելու կարելիութիւնից, ուրեմն անկախ քաղաքական կեանքից, չի կարող բաւական համարուել մի այդքան պատուական ցեղի զարգացման համար, որի կենսալի ուժերի կասեցումը մի հարուած կը լինի սպիտակ ցեղի զարգացման համար առհասարակ մանաւանդ նկատի առնելու է, որ ինքնավարութիւնը անզօր կը լինի, ներկայ պատերազմից յետոյ, շատ ու շատ տարիների ընթացքում բառնալ ատելութեան այն սաստկութիւնը, որ երևան է եկել անգլիացիների ու բուրերի մինջև։ Ահա թէ ինչու ամեն մի այլ մեծ պետութեան քաղաքական քայլ, որով Անգլիան կ՚ստիպուի բուրերի հետ հաշտութիւն կնքելու ներկայումս, ուրախութեամբ կ՚ողջունուի հասարակաց կարծիքի կողմից։

Z.